

Армянский Колледж

Учитесь АРМЯНСКОМ ГОВОРИТЬ НА ЯЗЫКЕ

+7 904 506 91 28

Յեղասպանություն – 98

Հայոց ցեղասպանության թանգարանի բացել նաև Ռուսաստանում



Հայոց ցեղասպանության հարյուրամյա տարելիցին ընդառաջ վերջերս Երևան-Մոսկվա տեսակամրջի ժամանակ քննարկվել է հետևանքներն ու այն դասերը, որ քաղել ենք այս մեկ դարի ընթացքում: «Անցել է մեկ դար, սակայն ցեղասպանության հետևանքները դեռևս վերացված չեն»: Դիտարկումը Հայոց ցեղասպանություն թանգարան-ինստիտուտի տնօրեն Հայկ Դեմոյանինն է: Արևելագիտության ինստիտուտի տնօրեն Ռուբեն Սաֆրաստյանը բարձր է գնահատում ՌԴ Դումայի ընդունած յուրօրինակ փաստաթուղթը՝ Արևմտյան Հայաստանում տեղի ունեցած ցեղասպանության դատապարտման մասին:

Անժովյան-կասպյան տարածաշրջանի քաղաքական և սոցիալական հետազոտությունների ինստիտուտի տնօրեն Վլադիմիր Չախարովը շեշտում է, որ Թուրքիան փորձում է խեղաթյուրել պատմությունը, հերքում է, որ ցեղասպանություն է եղել, և թուրքական կողմի վերաբերմունքն ու քայլերն այս հարցի վերաբերյալ ցինիզմի գազաթնակետ են: «Թեպետ թուրքերն իրենց այլ կերպ են դրսևորում, սակայն ինչ ուզում են՝ եղիր, կամ ինչ անուն ուզում են՝ ունեցիր, միևնույնն է, դու թուրք ես, ու շարունակում ես խաբել աշխարհին, որ Հայոց ցեղասպանությունը չճանաչվի: Թուրքական կառավարությունը հասկանում է, թե որքան փոխհատուցում պետք է տրամադրի Հայոց ցեղասպանությունից տուժածների ժառանգներին, դրա համար էլ չի ձանաչում իրողությունը», ասել է Չախարովը՝ հավելելով, որ Մեծ եղեռնի 100-րդ տարելիցին պետք է վերջակետ դրվի այս հարցին:

Չախարովը շեշտել է, որ Ռուսաստանում չկա համապատասխան գրականություն Հայոց ցեղասպանության ողբերգական իրադարձությունների մասին: Այդ հարցով նրանք դիմել են հայ գործընկերներին, սակայն Հայաստանից ստացել են կարճ պատասխան. «Փող չկա»: Չախարովը նաև առաջարկում է Ռուսաստանում ստեղծել Հայոց ցեղասպանության թանգարան:

ՌԴ Հանրային պալատի անդամ Դենիս Դվորնիկովն ասել է, որ ՌԴ Հանրային պալատում ներկայում փաստաթուղթ է քննարկվում Հոլոքոստի ժխտումը քրեականացնելու վերաբերյալ: «Ամեն ինչ պետք է ապրի, որ այդ փաստաթուղթը վերաբերի նաև Հայոց ցեղասպանությանը», որպեսզի այդ կերպ դատապարտվի մարդկության հանդեպ հանցագործությունը:

Հասմիկ Հարությունյան

АРМЯНСКИЙ ЯЗЫК ДЛЯ САМЫХ МАЛЕНЬКИХ



Ն
ՆԱԿԸ
Նավարկության ելավ Նակը
Նավապետի հետ հինուտ,
Հմուտ, ինչպես Նավագան
Նախնիները մեր հնուտ,
Որ գիտեին՝ ուր են լողում,
Ինչ են ուզում ծովերից,
Ալիքներից անհնազանդ,
Հողմերից ու հովերից:



Շ
ՇՆԻԿՈՎ ՀՈՒՇԱՆՇԱՆԸ
Որտեղի՞ց այն նշանը,
Այս լավ հուշանշանը,
Փրչոտ շուն է, իսկ շունն էլ
Շատ նման է իմ շանը:
Գլուխը մեծ է, գունչո,
Ականջները՝ լոշ,
Բերանը բաց ժպտում է,
Չի խոսում ափսոս...




Ո
ՈՐՍՈՐԴՆ ՈՒ ՈՋՆԻՆ
Ոգնին որդուն որոնելիս
Որսորդ քեռու դեմ էլավ:
Որսորդն ասաց.
-Որս լինեիր,
Աչքիս չէիր երևա...
Ոգնին էլ թե՛ որս եմ, որս չեմ,
Բայց ոգնի եմ իսկական,
Փորիս համար մեկնումեկի
Մատը ծակած դեռ չկամ...




Рубрику ведет преподаватель армянского языка Арmine Варданян

Նյութը վերցված է Յուրի Սահակյանի «Այբբենարանի ուղեկից» գրքից
Տպագրության պատրաստեց Արմինե Վարդանյանը


КРОССВОРДЫ ОТ ШОГИК СИМВОНЯН



Кроссворд № 22
По вертикали:
2. Парта, скамейка. 3. Музыка, мотив.
По горизонтали:
1. Дом. 4. Коварный, вероломный.



Кроссворд № 23
По направлениям стрелок:
1. Блестеть.
2. Спасибо.



Кроссворд № 24
По вертикали:
1. Охотник. 2. Как?
По горизонтали:
1. Золото.



Рубрику ведет преподаватель армянского языка Шогик Симвонян

Օրերի հետ

ՍԻՐՈՒՄ ԵՄ ԱՊՐԵԼ ԵՎ ԶԳԱԼ, ՈՐ ԱՊՐՈՒՄ ԵՄ



Սույն թվականի մայիսի 15-ին Ռոստովի մարզային ֆիլիարմոնիայի մեծ դահլիճում տեղի կունենա Ռոստովի մարզային ֆիլիարմոնիայի մենակատարուհի, բազմաթիվ մրցանակների դափնեկիր, հոգևոր, դասական, ժողովրդական երգերի անզուգական կատարող Գայանե Ջանիկյանի մենահամերգը: Երգչուհին այն նվիրում է իր ժողովրդին, իր հայրենիքին՝ «Երգում եմ քեզ, իմ Հայաստան»: Գրեթե երկու տասնյակ տարի լինելով պանդուխտ, նա երբեք չի մոռանում իր հայկական արմատները, հայոց հողն ու ջուրն, այն մեծ հոգևոր հարստությունը, որ ունի ինքն ու իր ժողովուրդը: Բոլորի նման, նա էլ ստարության մեջ ապրում ու սնվում է Հայաստանով, երգում ու աղոթում՝ հայրենի: Նրա կատարումներն աղոթք են առ Աստված: Նա հավատում է Աստծուն, հավատում է, որ Աստված իրեն երգելու շնորհ է պարգևել:

Սիրում է կյանքը, սիրում է ապրել և զգալ, որ ապրում է: Նա ժպտում է միշտ, ժպտում՝ բոլորին, նա երբեք չի տրուցում: Աստված նրան պարգևել է ոչ միայն հրաշալի ձայն, այլ նաև՝ չնաշխարհիկ գեղեցկություն:

Հարցազրույց Գայանե Ջանիկյանի հետ:
- Տիկին Գայանե, դառնալ երգչուհի, մանկության երազանք էր, արդյոք, թե՛...
- Չեմ կարող ասել, երազանք էր, թե՛ ոչ, բայց միշտ ցանկացել եմ երգել: Մանուկ հասակում, էջմիաժում, պատարագի ժամանակ, ունկընդրել եմ Լուսինե Չաքարյանին, հենց այդ ժամանակ էլ զգացել եմ Աստծո ներկայությունը և ցանկացել եմ երգել նրա նման:
- Երբ փորձում եք ձանաչել ինքներդ ձեզ, հայտնաբերո՞ւմ եք խառնվածքի այնպիսի գծեր, որոնք կուզենայիք, որ չլինեին:



- Բոլորս էլ, անշուշտ, ունենք թերություններ, այդ թերությունները տեսնելը մեծ տաղանդ է: Մեկ, երկու օրում շտկել թերությունները, կարծում եմ, հնարավոր չէ: Տարիներ են պետք դրանք շտկելու համար: Մարդ պետք է ձանաչի ինքն իրեն ու Աստծուն: Աստծո միջոցով

մենք կարող ենք հասնել կատարելության, պարզապես պետք է ձգտենք դրան:
- Մայիսի 15-ին Ռոստովի մարզային ֆիլիարմոնիայում կկայանա ձեր մենահամերգը: Ի՞նչ երգացանկով եք այս անգամ ներկայանալու հանդիսատեսին:
- Ինչպես միշտ, երգացանկս բազմազան է և տարբեր ամենամյա իմ համերգների երգացանկից: Լինելու են դասական, ժողովրդական, հոգևոր երգեր, մի փոքր գրական մաս կլինի: Նվագակցում են Ռոստովի ակադեմիական սիմֆոնիկ երաժշտախմբի լարային կվարտետի երաժիշտները:
- Ի՞նչ կմտաք ձեր հանդիսատեսին:
- Իմ համերգներն ունկնդրում են ոչ միայն իմ հայրենակիցները, այլ նաև ռուս հանդիսատեսը: Ցավում եմ, որ այսօր մեր ազգը հեռացել է իր հոգևոր արմատներից, իրեն ծանրաբեռնել տաղուկալի ու միապաղաղ առօրյայով: Չէ որ, մարդ բացի նյութական պահանջմունքներից, ունի նաև հոգևոր սնունդ ստանալու պահանջմունք, որն այսօր անտեսում ենք: Քիչ ենք այսօր հոգևոր կերակուր ստանում, մեր հոգևոր կյանքը կատարելագործում, չենք ունկնդրում մեր բժշկող երաժշտությունը, տեղ չենք կանգնում մեր դարավոր հարստությանը, չենք հաճախում եկեղեցի, չենք լսում քահանայի քարոզը:
Համերգներից հետո, փողոցում ինձ հաճախ է մոտենում ռուս հանդիսատեսը և շնորհակալություն հայտնում իմ երգերի համար: Ինչո՞ւ մեր ազգը հաղորդակից չլինի այդ հոգևոր սնունդին, թող գան, մասնակցեն համերգին, վերհիշեն իրենց երկիրը, իրենց ջուրը, իրենց հողը: Ամեն ծառ ունի արմատ, որտեղից էլ նա սնունդ է ստանում: Մեր արմատն էլ դարերից եկող մեր տիեզերական երգն է, սնվենք նրանով, հարստանանք, ապրենք այդ երգով ու զգանք, որ ապրում ենք:
Հարցազրույցը՝ Արմինե Հովսեփյանի